

ԿԱՐԾԻՔ

Արտաշես Արտավազդի Խալաթյանի՝ «Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիայի հիմնախնդիրները» վերտառությամբ ժԲ.00.01՝ «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

17.09.2024թ.

Արտաշես Արտավազդի Խալաթյանի՝ «Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիայի հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության թեման խիստ արդիական է: Այն արտահայտում է Հայաստանի Երրորդ Հանրապետության ավելի քան երեսնամյա պատմության ընթացքում հայրենի պետաիշխանական համակարգի իրավակառուցակարգային պարբերական փոխակերպումների տարուրտ գիտական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը. հեղինակի մասնագիտական դիսցիպլինի շրջանակում թեման ուսումնասիրվել և հետազոտվել է տեսական-իրավական և պետականագիտական տեսանկյունից՝ բարձրացնելով ոչ միայն տեսական-իրավական և պատմաիրավական, այլև էմպիրիկ կարևորություն ունեցող և ներկայիս պետաիրավական զարգացումներին համահունչ հիմնահարցեր:

Մասնավորապես, հաշվի առնելով, որ Հայաստանում նախատեսվում են սահմանադրական փոփոխություններ, անգամ խոսվում է նոր Սահմանադրության ընդունման մասին, կասկածից վեր է, որ նախընթաց պետաիրավական և հատկապես սահմանադրաիրավական գործընթացների և կուտակված ինստիտուցիոնալ փորձի գիտական ուսումնասիրությունն այն անփոխարինելի միջոցն է, որի օգնությամբ հնարավոր է ուսումնասիրել մեզանում գործած պետական կառավարման ձևերի հաջորդայնության ներքին տրամաբանությունը, համակարգային օրինաչափությունները, բացահայտել դրանք խթանող սոցիալ-իրավական և քաղաքական նախադրյալները, արձանագրել նախկին և ներկա իրավակառուցակարգային խնդիրները և նախանշել դրանց լուծման ուղիները՝ այդպիսով ապագա սահմանադրական փոփոխությունների շուրջ հանրային բանավեճը հարստացնելով օգտակար և գիտականորեն հիմնավորված տեղեկությամբ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 2 գլխից, 5 ենթագլխից, եզրակացությունից և 149 սկզբնաղբյուր պարունակող գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, համակարգված կերպով ներկայացված են՝ թեմայի գիտական մշակվածության վիճակը, հետազոտության տեսական և փորձարարական հիմքը, նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան,

մեթոդաբանական հիմունքները, նորմատիվ-իրավական հիմքերը, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Հետազոտության 1-ին գլուխը՝ «ՀՀ պետական կառավարման ձևի էվոլյուցիան և օրինաչափությունները նախքան 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները» վերտառությամբ, կազմված է 3 ենթագլխից և նվիրված է նախքան 2015թթ. սահմանադրական փոփոխությունները Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ձևի զարգացման հիմնախնդիրներին: Ի մասնավորի, հեղինակի կողմից, ըստ էության, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ձևերը դասակարգվել են հետևյալ կերպ՝ 1990-1991թթ.՝ խորհրդարանական կառավարման ձև, 1991-1995թթ.՝ նախագահական կառավարման ձև, 1995-2005թթ.՝ գերնախագահական կառավարման ձև, որը, ըստ հեղինակի, իրենից ներկայացրել է կիսանախագահական կառավարման համակարգի ձևախեղում, 2005-2015թթ. (գործնականում՝ մինչև 2018թ.)՝ կիսանախագահական կառավարման ձև և 2018թթ. առայսօր՝ խորհրդարանական կառավարման ձև:

Հեղինակի կողմից կատարվել է Հայաստանի Հանրապետության տվյալ պատմաշրջանում գործած պետական կառավարման ձևի իրավահամեմատական և պատմաիրավական վերլուծություն, օգտագործվել է օտարերկրյա և միջազգային փորձը, այդ թվում վերաբերելի ներպետական, օտարերկրյա և միջազգային իրավական ակտերը, հետազոտվել են յուրաքանչյուր շրջափուլում Հայաստանի Հանրապետության սոցիալ-իրավական և քաղաքական պայմանները, որոնք այս կամ այն չափով ազդել են պետական կառավարման ձևի ընտրության և համապատասխան քաղաքական պրակտիկայի ձևավորման վրա:

Հետազոտության 2-րդ գլուխը, որը կոչվում է «Խորհրդարանական կառավարման ձևը Հայաստանի Հանրապետությունում և դրա հիմնախնդիրները 2015թ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում», կազմված է երկու ենթագլխից: Այն նվիրված է խորհրդարանական կառավարման ձևի անցման հիմնավորմանը, դրա վերլուծությանը՝ հիմք ընդունելով 2015թ. Սահմանադրությունը, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը և վերաբերելի նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև գործող կառավարման ձևում ու վերջինով պայմանավորված՝ լայն առումով, քաղաքական համակարգում առկա ինստիտուցիոնալ խնդիրների բացահայտմանն ու դրանց հաղթահարման ուղիների նախանշմանը: Մասնավորապես, վկայակոչելով Հայաստանի պատմա-իրավական ավանդույթը, առաջ քաշելով խորհրդարանական կառավարման ձևի սահմանման պահանջը դեռևս Անկախության հռչակագրով նախանշված լինելու թեզը, ինչպես նաև էլիտաների տեսության հիման վրա վերլուծելով Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում տեղի ունեցող զարգացումները և դրանց օժանդակությամբ սոցիալական համահավաք միջավայրը՝ հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանում կառավարման խորհրդարանական ձևի սահմանադրական ամրագրումը պահանջված էր:

Խորհրդարանական կառավարման համակարգի շրջանակում բացահայտված պետա-իրավական խնդիրները գերազանցապես ներառված են հեղինակի կողմից

կաշտպանության առաջադրված յոթ դրույթներում, որոնք վերաբերում են Հանրապետության վարչապետի ընտրության և կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման կարգին, ընդդիմությանը վերջինիս սահմանադրական ինստիտուցիոնալացմանը համարժեք և իրականում իրացվելի լիազորությունների վերապահմանը, Հայաստանի Հանրապետության ռազմա-պաշտպանական ապակենտրոնացված համակարգի սահմանադրական և կառուցակարգային վերանայմանը, Նախագահի սահմանադրական կարգավիճակին համահունչ լիազորությունների սահմանմանն ու քաղաքական ճգնաժամերի հանգուցալուծման սահմանադրական կառուցակարգերի վերատեսությանը:

Պաշտպանության ներկայացված դրույթները գիտականորեն հիմնավորված են և տրամաբանորեն փաստարկված:

Ատենախոսության եզրակացությունում հակիրճ ներկայացված են հետազոտության արդյունքները, որոնք բխում են հետազոտության նպատակից և խնդիրներից:

Վերոնշյալի լույսի ներքո կարելի է եզրահանգել, որ ատենախոսությունում պատշաճ գիտական մակարդակով լուծված են հետազոտության նպատակից բխող խնդիրները:

Ատենախոսության շարադրման ոճն ու լեզուն համապատասխանում են թեկնածուական ատենախոսությանն առաջադրվող ակադեմիական պահանջներին, իսկ հետազոտության տեքստի ձևաբանական և շարահյուսական կառուցվածքը վկայում են գիտական նյութի կառուցման՝ հեղինակի կարողության մասին:

Նշյալ առավելություններից զատ ստորև առանձնացվել են որոշ նկատառումներ:

1. Ատենախոսությունը բովանդակային առումով կշահեր, եթե 1-ին գլխի 2-րդ ենթագլխում ըստ հեղինակի՝ «գերնախագահական կառավարման համակարգի» սահմանադրական ամրագրման պատճառներն ու նպաստող պայմանները վեր հանելիս ուսումնասիրության առարկա դառնային Սահմանադրական հանձնաժողովի և Գերագույն խորհրդի նիստերի արձանագրությունները, որոնցում արտացոլված գիտական և քաղաքական բանավեճերը կարող էին հարստացնել ատենախոսության հեղինակի փաստարկումներն առ այն, թե ինչու և ինչպես 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ որդեգրվեց պետա-իշխանական համակարգի տվյալ ճարտարապետությունը: Թեպետ հեղինակի կողմից կատարվել է համարժեք և բազմակողմանի վերլուծություն, նշյալ փաստական նյութը կարող էր օգտակար լինել:

2. Հեղինակի կողմից ուսումնասիրման առարկա չի դարձվել դատական իշխանության վրա պետական կառավարման ձևի ունեցած ազդեցությունը և փոխադարձ կապը, ինչը ևս կարող էր քննարկվել պետական կառավարման ձևի զարգացման, ներքին փոխակերպման և փոփոխման պայմանների համատեքստում:

3. Ամենևին չթերագնահատելով ատենախոսության գիտական արժեքը՝ խորհրդարանական կառավարման ձևի սահմանադրական ամրագրման պատճառներն ու պայմանները քննարկելիս, կարծում ենք, տեղին կլիներ առավել մանրամասն անդրադառնալ Հայաստանի Առաջին Հանրապետության փորձին, քանզի վերջինս Հայաստանի առաջին

տրիրդարանական ժողովրդավարությունն էր, և վերջինիս թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը կարող են ուսանելի լինել նաև մեր օրերում:


Արված նկատառումները, ըստ էության, խորհուրդներ են և բոլորովին չեն ազդում ատենախոսության գիտական արժեքի վրա:

Արտաշես Արտավազդի Խալաթյանի՝ «Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիայի հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսությունն ինքնուրույն և արժեքավոր գիտական հետազոտություն է, որն ունի տեսական և գործնական նշանակություն, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲԿԳԿ-ի կողմից ԺԲ.00.01՝ «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս

Իրավաբանական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր՝

 Ն.Վ. Նալբանդյան Ստեփանյան

Հովհաննես Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի

ինստիտուտի գիտքարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու



 Հայկ Նալբանդյան